



17:39 28/05/2014 » ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

# Նախագահի ելույթը՝ որպես ուղիղ դիսկուրս սկսելու Հայաստանի ցանկություն և ճիշտ մշակված քայլ, կարծիքներ

«Պաշտոնապես հրավիրում եմ Թուրքիայի նախագահին, ով էլ որ ընտրվի առաջիկա ընտրությունների ժամանակ, այցելելու Հայաստան 2015 թվականի ապրիլի 24-ին և առերեսվելու Հայոց Ցեղասպանության պատմության խոսուն վկայություններին,- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի չորրորդ նիստի ժամանակ [հայտարարել էր](#) ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

«Նախ պետք է նշեմ, որ մինչ հրավիրելը նախագահը երեկ հստակ կետերով հիմնական ուղերձներ հղեց Թուրքիայի ղեկավարությանը, որով առաջինը ցույց տվեց, որ ըստ

էության Թուրքիան այսպես թե այնպես առերեսվում է Ցեղասպանության փաստի հետ, և այսօր աստիճանաբար թուրքական իշխանությունները արդեն դժվարանում են իրականությունը այլև ձևով ներկայացնել»,- անդրադարձնալով նախագահի ելույթին՝ panorama.am-ի հետ զրույցում նման տեսակետ հայտնեց ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Մհեր Հովհաննիսյանը:

Ըստ Մ. Հովհաննիսյանի՝ նախագահի ելույթում Ցեղասպանության խնդիրը պատմաբանների հարթակում քննարկելու վերաբերյալ նույնպես առկա է հստակ ուղերձ առ այն, որ բավական է մեկ անգամ մարդը գա, ներկա լինի Ցեղասպանության թանգարանում, առհասարակ սփյուռքի հետ առնչվի, որպեսզի փարատվի վերջինս մոտ Ցեղասպանության լինելիության մասին առկա կասկածները:

«Այս ուղերձի սկզբնավորումը դնելով՝ նախագահը ուղակիորեն այս հողի վրա հստակորեն կոչ արեց, որ առաջարկում է որպեսզի ավելորդ քննարկումները մի կողմ դնեն և գան ու տեղում տեսնեն, թե ինչպես է հայությունը այդ ցավն ու վիշտը տանում և կիսեն մեզ հետ այդ վիշտը, որ անկախ ամեն ինչից մենք հարևաններ ենք և առնչվելու ենք, իսկ առնչվելու համար քայլեր պետք է անենք»,- նշեց Մ. Հովհաննիսյանը:

Վերջինիս փոխանցմամբ՝ նախագահի ելույթում հստակորեն կարելի է տեսնել սեփական խնդիրների շուրջ ուղիղ դիսկուրս ունենալու Հայաստանի պատրաստակամությունը և ցանկությունը:

«Նախագահը հստակ ուղերձներ կատարեց և այդ ուղերձների վրա հենվելով, որ եթե կասկածելու խնդիր կա, եթե ուսումնասիրելու խնդիր կա, ապա ավելի լավ է գալ և տեսնել, հետևաբար որպես երկրի ղեկավար, բնական է, պաշտոնապես հրավիրեց, որ գան և տեսնեն այդ ամենը»,- ասած Մ. Հովհաննիսյանը:

Բանախոսի փոխանցմամբ՝ Ցեղասպանության հետ կապված հիշատակումները անհրաժեշտ են նաև այն պատճառով, որ թուրքական հասարակությունը ամեն անգամ ինքը դրդի և ստիպի սեփական իշխանություններին՝ ի վերջո առերեսվելու այդ փաստի հետ:

«Նախագահի ուղերձի մեջ հստակ էր, որ Հայաստանը միայն չի պատրաստվում խնդրելու ճանաչում, մենք ուժեղ պետության, ուժեղ սիյուռքի միջոցով տեր պետք է կանգնենք մեր կորցրած պատմական անցյալին», - եզրափակեց Մ. Հովհաննիսյանը:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը թուրքիայի նախագահին հրավիրելու ՀՀ նախագահի քայլը բնորոշեց որպես «ճիշտ մշակված քայլ»:

«Կարծում եմ նախագահի հրավերը շատ լուրջ և ճիշտ մշակված քայլ է: Առաջին հերթին այն կարևոր է թուրքիայի հասարակական կարծիքի վրա ազդելու, ինչպես նաև համաշխարհային հասարակական կարծիքի վրա ազդելու տեսանկյունից», - ասաց Ռ. Սաֆրաստյանը:

Ըստ թուրքագետի՝ թուրքիայի նախագահին Հայաստան հրավիրելու հանրապետության նախագահի քայլը այլ դրական կողմեր ևս ունի:

«Եթե թուրքիայի նախագահը իսկապես իր մեջ խիզախություն գտնի և ներկա գտնվի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում, ապա կհասկանա, որ Հայոց Ցեղասպանությունը ոչ միայն պատմական փաստ է, այլ այն մեր ժողովրդի հոգում է, և այդ օրը հարյուր հազարավոր, անգամ միլիոնավոր մարդկանց ներկայությունը Ծիծեռնակաբերդում հենց այդ մասին է վկայում», - նշեց Ռ. Սաֆրաստյանը:

Բանախոսի փոխանցմամբ՝ 2015 թ ապրիլի 24-ին Ցեղասպանության զոհերի հուշահամալիր

## Ծիծեռնակաբերդում ներկա գտնվելը առաջին հերթին անհրաժեշտ է հենց Թուրքիայի նախագահին:

«Սա առաջին հերթին պետք է նաև իրեն՝ Թուրքիայի նախագահին՝ որպես Թուրքիայի ներկայացուցիչ, Ծիծեռնակաբերդում տեսնելով այդ ամենը, գուցե ներողություն խնդրի, կամ՝ մեղա գա», - հավելեց Ռ. Սաֆրաստյանը:

Աղբյուր՝ Panorama.am